



«Հաստատում եմ»

Ուս-Հայկական համալսարանի
դեկտոր, պրոֆեսոր՝ Է.Մ. Սանդրյան

« 24 » դեկտեմբերի 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Նարեկ Էդուարդի Խաչատրյանի ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Влияние интервального метода тренировки с применением эргогенного средства на скоростную выносливость футболистов» վերնագրով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից ֆուտբոլում ֆուտբոլիստների էներգետիկ և ֆունկցիոնալ համակարգերի ուսումնասիրությանը նվիրված գիտամեթոդական գրականության մեջ, փորձագետներն առանձնացնում են ալակտատային (կրեատինկինազային) էներգամատակարարման համակարգի զարգացման բարձր մակարդակը, քանի որ մրցակցային գործունեության ընթացքում ֆուտբոլիստները հաճախ աշխատում են ենթամաքսիմալ և մաքսիմալ հզորության գոտիներում և կատարում են արագացումներ, պոկումներ, որոնք մի կողմից բերում են մկանային հյուսվածքում կրեատինֆոսֆատային էներգիայի պաշարների սպառմանը, իսկ մյուս կողմից գլիկոգենի պաշարների նվազմանը:

Խնդրի հնարավոր լուծումներից մեկը կարող է լինել ֆուտբոլի շարժողական գործունեությանը առավել մոտ մարզման ինտերվալային մեթոդի կիրառումը:

Ն.Է. Խաչատրյանի ատենախոսությունը նվիրված է մարզման ինտերվալային մեթոդի ազդեցությունը ֆուտբոլիստների արագային դիմացկունություն վրա ալակտալային էներգամատակարարման համակարգի շրջանակներում էրգոգեն միջոցի կիրառմամբ և մշակել դրա կատարելագործման մեթոդիկան:

Ատենախոսական կառուցվածքը կրում է դասական ձև, բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, գործնական առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի բովանդակությունը ներկայացված է համակարգչային տեքստի 131 էջերի վրա և ընդգրկում է 47 աղյուսակներ և 42 պատկերներ: Օգտագործված գրականության ցանքը պարունակում է 254 աղբյուր:

Ներածությունում ատենախոսը ներկայացրել է աշխատանքի նպատակը, խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, գիտական նորույթը, օգտագործված մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ գրական աղբյուրների խորը վերլուծություն ինչը հնարավորություն ընձեռնեց բացահայտել պրոբլեմային իրավիճակը և ընտրել նրա լուծման ուղիները:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված են հետազոտության բազմազան մեթոդները, մանկավարժական գիտափորձի կազմակերպում, փուլայնությունը և նրանում ընգրկված հայաստանյան արտասահմանյան ֆուտբոլիստների քանակակազմը:

Մանկավարժական գիտափորձը մարզումային գործընթացում ինտերվալային մեթոդի կիրառմամբ անց է կացվել «Փյունիկ», «Շիրակ» և «Արարատ» ֆուտբոլային ակումբների ակադեմիաներում:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են մարզման ինտերվալային մեթոդով ֆուտբոլիստների արագային դիմացկունության կատարելագործման հիմնավորումը:

Մշակվել և փորձարարական եղանակով հիմնավորվել է թեստ՝ ֆուտբոլիստների արագային դիմացկունության մակարդակը որոշելու համար:

Ատենախոսության չորրորդ գլխում հեղինակը վերլուծել է մանկավարժական գիտափորձի արդյունքները և նախանշել ֆուտբոլիստների մարզման ինտերվալային մեթոդի և էրգոգեն միջոցի ընդունման համակցված ազդեցությունը նրանց արագային դիմացկունության վրա:

Ամփոփելով մանկավարժական գիտափորձի արդյունքները կարելի է փաստել, որ Ն.Է.Խաչատրյանի կողմից մշակված ինտերվալային մարզման մեթոդիկան համակցված էրգոգեն միջոցի կիրառմամբ նպաստել է ֆուտբոլիստների արագային դիմացկունության կատարելագործմանը:

Հեղինակը իր հետազոտության արդյունքները հրատարակել է միջազգային և հայրենական ամսագրերում և գիտական ժողովածուներում:

Առանձնահատուկ պետք է նշել, որ աշխատանքը ներկայացված է բաժինների և մթքի տրամաբանական հերթականությամբ, ապահովել է մանկավարժական գիտափորձի տեսական և մեթոդական հիմքը:

Հեղինակը լիովին լուծել է հետազոտության առջև դրված խնդիրները, որոնք արտացոլված են եզրակացություններում:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.

1. Ցանկալի է, որ աշխատանքում որպես օրինակ բացի նշված մարզական պարապմունքի կառուցվածքից և ուղղվածությունից ներկայացվեր մեկ պարապմունքի կոնսպեկտ:
2. Ցանկալի կլիներ, որ մշակված թեստը փորձարկվեր նաև մրցակցական շրջանի ընթացքում, արագային դիմացկունության մակարդակը գնահատելու նպատակով:

Սակայն նշված նկատառումները և որոշ վրիպումները չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և նրանում լիովին արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նարեկ Էդուարդի Խաչատրյանի ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Влияние интервального метода тренировки с применением эргогенного средства на скоростную выносливость футболистов» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտության թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է և հաստատվել է և հաստատվել է Ռուս-Հայկական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի նիստում (արձանագրություն թիվ 7), որին մասնակցել են՝ մ.գ.դ., դոցենտ Ա.Լ.Գրիգորյանը, մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Ս. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Բ.Մնացականյանը, մ.գ.թ. Ա.Ա. Կովալյովան, Ն.Հ. Աբրահամյանը, Ա.Ժ. Աբրահամյանը, Է.Բ. Սիմոնյանը, Ա.Գ. Գալստյանը, Ա.Ա. Շալջյանը:

Ֆիզիկական դաստիարակության
և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ
մանկ.գիտ.դոկտոր, դոցենտ

Ա.Լ. Գրիգորյան

Հաստատում եմ Ա.Լ.Գրիգորյանի ստորագրությունը
Ռուս-Հայկական համալսարանի
Գիտական քարտուղար՝ բան.գիտ.թեկ.

Դ.Ս.Կասաբաբովա

24 դեկտեմբերի 2025թ.

